մանդոները տեսնել, և հէնց մոտիկ բարեկամ և ծանօթներ մոտ 8 մարդ, որոնք եղել են երիտասարդներ, և որոնց մանկուլուց յետ ծնող-ընտանիք թողել են մեծ խղճութեան մէջ.

Որովհետև ես հեռացել եմ և առողջ եմ, խորհուրդ եմ տալիս բոլոր հայերին թողնել այդ կրոտական արհեստը, և մի ուրիշ արհեստ, գործ գտնեն, որ համեմատաբար լաւ կը լինի, քան ծրխխոտագործութիւնը։

Ուրախ եմ, որ յաջողվեց մի քանիսին գրգռել որ թողնեն իրանց վատ արհեստը։

Առաջայ ծնողներին խորհուրդ տալու, որ բացի այն որ ֆիզիկապէս փչանում են, կը փչանան և բարոյապէս, որովհետև ամեն մէկը, ինչպէս յայտ ունեմ խոստովանվի ինձ հետ, որ ծխխոտարաններում սարսափելի անբարոյականութիւն է տիրում, որ ոչ մի տեղ այնպէս առաջադիմութիւն չէ արել անբարոյականութիւնը, ինչպէս այդտեղում։

Շնորհակալութեամբ յայտնում եմ որ իմ նամակ առանց ուշադրութեան չը մնաց հայ գործատանատերերի կողմից. ինչպէս լսում ենք պ. Մարտիրոսեանը աշխատում է հայերի վրա ազդեցութիւն գործել։ յայտ ունենք պ. պ. Միրզոյեան և Ամիրեան ևս վերջ կը տան իրանց անտարբերութեան։

Աղէքսանդր Աբրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ցօգուտ «Փուրնալ դ'Օրիան» լրագրի ստացանք պ. Վ. Մոմթաֆեանից 8 բուբլ և պ. Ա. Մկիրտչ Ազարեանից 8 բուբլ։ Առաջվայ փոգերի հետ կանի 1.084 բ. 50 կ։

—

Ստացանք պ. Ե. Գասուրեանից նրա ձեռքով յօգուտ «Փիսցեալ ընկերութեան» ժողոված 51 բուբլ 20 կոպ։

—

Ուրբաթ օր, սեպտեմբերի 18-ին, ուղարկեցինք կ. Պոլիս 2,300 բուբլ պ. Մոմթաֆեանի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Սէն-Դիէի մէջ մինիսթրնախագահ Ֆերրի մի ճառ արտասանեց, որ հրատարակվեցաւ և քննվում է բոլոր լրագրերի մէջ։ „Temps“ լրագրի կարծիքով փիլ Ֆերրի իր ճառով պատրաստակամութիւն է յայտնում տեղ տալ նոր միջնորդութեանը, որ կը կազմէ հանրապետութեան նախագահը Ֆրանսիական ազգային ժողովների բացվելուց յետոյ։ „Journal des Débats“ լրագիրը ասում է, որ փիլ Ֆերրի կատարելապէս հանգամանաստանում է լրագրի քարոզած չափաւոր քաղաքականութեանը։ Այդ լրագրի կարծիքով փիլ Ֆերրի մի քայլ առաջ գնաց, իսկ Գամբետտա մի քայլ յետ գնաց. նրանք երկուսն էլ հանդիպեցան միմեանց և կարող են ձեռք ձեռքի տուած առաջ գնալ, գլուխ չտեսնելով վերանորոգութիւններ մտցնելով երկրի մէջ։ Արմատական լրագիրները յարձակվում են Ֆերրիի վրա և ծաղրում են նրա ինքնահաւան ընթացքը։ Մինիստրի ճառը ինքն ըստ ինքեան նշանաւոր չէ։ Բացատրելով ժողովրդի առաջադիմութիւնը, նա մատնացոյց եղաւ գիւղական և քաղաքային ազգաբնակութեան մտնելու վրա քաղաքական հասկացողութիւնների և ձգտումների փոխարինումը։ Հանրապետութիւնը իր կողմը դարձրեց պաշտպանական երկրագործ. դասը իր հիմնարկութիւնների հաստատութեան և ընդհանուր հանգստութեան շնորհիւ։ Այդ պատճառով հնարաւորութեան արժանի են խելացի չափաւոր գործիչները։ Ֆերրի խոստացաւ յարձակվիցաւ արմատականների վրա, որոնք հանդգնվիցան ցեղս զցել „ոչ թէ միայն պատուական հրապարակախօսի, այլ և իր հայրենիքին ահագին ծառայութիւններ մատուցանող երեւելի քաղաքացու վրա։“ Այդ խօսքերը, որոնք Գամբետտային էին վերաբերում, ազդեցին ծափահարութիւններով ընդունվեցան։ Ի միջի այլոց իր ճառի մէջ Ֆերրի ասաց, որ նա խօսում է ոչ թէ իբրև մինիստր-նախագահ, այլ իբրև հասարակ պատգամաւոր և որ նրա խօսքերից քաղաքական եզրակացութիւններ անկարելի է անել, որովհետև ապագայի անօրինութիւնը կատարելապէս կախված է հանրապետութեան նախագահից։ Այս խօսքերը շատ նշանաւոր են, որովհետև նրանք ապացուցանում են, որ ինքը կառավարութիւնը անհրաժեշտ է համարում մինիսթրութեան փոփոխութիւնը և որ մինչև ազգային ժողովների գումարվելը նոր մինիսթրութիւն կը կազմվի Գամբետտայի նախագահութեամբ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. Պետերբուրգ, 18 սեպտեմբերին։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 բ. 75 կ., երկրորդ 94 բ., երրորդ 94 բ. $12\frac{1}{2}$ կ., չորրորդ 93 բ. $62\frac{1}{2}$ կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 226 բ., երկրորդ 220 բ. արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 բ. 25 կ., երկրորդ 91 բ. 25 կ., երրորդ 91 բ. 25 կ., ոսկի 7 բ. $63\frac{1}{2}$ կ։ Ռուսաց 1 բ. Լօնդոնի վրա արժէ 26 պէնս, Ամստերդամի վրա 131 պէնս, ռուսաց 100 բ. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 62 պֆ., Փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 75 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Ս. Պետերբուրգ, 19 սեպտեմբերի։ Բարձրագոյն հրամանագրով կոմս Ագլերբերգ առագին շնորհված է ալմանեքով զարդարված Կայսր Աղէքսանդր երկրորդի պատկերը։ Սենատին տուած հրամանով սեպտեմբերի 3-ից Վսեվոլոժսկի նշանակված է կայսերական թատրոնների գլխաւոր։ Ֆոնդովրական լուսատուութեան մինիստր Բաբոն Նիկոլայ վիրապարձաւ սեպտեմբերի 16-ին։

Կ. Պոլիս, 19 սեպտեմբերի։ Կարմիրից սեպտեմբերի 16-ից հաղորդում են, որ Զաղարիի շրջանակներում երկրաշարժ է եղել։ Շատ տներ և մզկիթներ քանդված են։ 12 մարդ սպանվել են։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ծաւորութիւնը հաստատելու համար բաւական էր մի որ և է հին թուրքի խոսքերի ժամանակից, իբրև խոսքերի պատուիրանք և հրամայական։ Այդտեղից սկսվում են անթիւ չարագործութիւններ, խարեբայութիւններ, որ չեն քննված կատարելապէս և մինչև այժմ,— կարելի են համարվում այնպէս զէպքեր, երբ մի մարդ գնում է գիւղից մի կոր հող և յետոյ մի կերպ բէգութիւն ձեռք բերելով իրան կալուածատէր է կոչում և գիւղերի վրա իշխող.... իսկ կեղծ հրամայական գրելու գործին օգնողներ միշտ կան, գրագրական զանազան չահատէր մոլլաներ — Մանրամասն նիթեր և ճիշտ տեղեկութիւններ չունենք բէգութեան վրա մինչև այժմ. մինչդեռ բէգական յանձաժողովի գործունէութիւնից արդէն չատ բան կարելի էր քաղել։ Եւ հէնց դա է մեր թշուառութիւնը, որ ոչ մի բանի վրա նիթեր չունենք ժողոված և պատրաստած։ Եւ ի հարկէ մեր գիւղացին կը պատժվի մեր ոգիութեան պատճառով։

VI

Մենք ասում ենք, որ մեր կալուածատէրերը պէտք է աշխատեն աւելի մարդասէր լինել հողային վճռաբեկութեան գործում, քան ուրիշ տեղերինը։ Այդպէս լինելը պահանջում է պատմութեան փորձը և արդարութիւնը. այդպէս պահանջում է այն հանգամանքը, որ մենք նրանց ոչ ենք այդ գործին ձեռնարկում։

Բայց ովքեր են կովկասեան կալուածատէրերը, որոնց մարդասիրական զգացմունքի վրա ենք յոյս դնում.—Հէնց փոքր ի չատէ երեսը նրա մէջ այն ազատամիտ ուղղութեան մի մասը, որ իր ժամանակին բարձրաձայն պաշտպանումէր ռուս կալուածատէրերի լաւագոյն մասը։ Օրինակ են ուզում.—ինչու այդպէս օրինակ ոչ մէկը զրանցից չէ կանգնում առնել։ Կալուածատիրական դասի մէջ երևացած մարդիկը ոգեորված էին ժողովրդի բարօրութեան գաղափարով, որ իրանք պատրաստ էին ամենակերպ զոհեր տալելու. և զուր տեղը չեն նրանք զարգարում իրանց երկրի Նորագոյն պատմութեան այն աքանչելի երեսը։ Այդ մարդկերանց՝ ժողովրդը և գրականութիւնը յիշում է և գէպի նրանց ուղեցած յարգանքը ոչ մի բան աշխարհումս չէ կարող խախտել։

Ո՞ւր են մեր մէջ այդպիսի կալուածատէրերը, որ իրանք առաջնը խօսէին-առաջնորդէին աւելի լայն, ժողովրդի համար աւելի յարմար հողային յարաբերութիւններ։

Ինչու ենք այդ պահանջում կալուածատէրից, երբ աւելի անաչառ գործունէութեան ընդունակները լուռ ու խուլ են մնացել մինչև այժմ —մեր խօսքը մեր իրաւարանների վերաբերմամբ է։ Դա թիչ անհերեի տնտարբերութիւն է, որ երևում է նրանց կողմից այսպիսի կարեւոր խնդիրներում էլ երբ պէտք է նրանք խօսեն, էլ որ օրվայ են թողել նրանք իրանց գիտութիւնը և ճարտարութիւնը։ Ուր է նրանց մեր երկրի խոր ուսումնասիրութեան արդիւնքը։

Քնած են մեր իրաւագէտները խոր քնով. նրանք, արդէն այդպէս քնեցին, երբ մեր մէջ դատաստանական հարցումները մտցվում էին չատ ուրիշ խնդիրների հետ. այժմ քնում են կալուածական խնդիրները, էգուց էլ՝ մի ուրիշ և այլն։ Գուցէ կը զարթնեն այն ժամանակ միայն, երբ ամենայնասար գործը կատարված կը լինի և լաւ թէ վատ վերջացած։

Իսկ ինչ ասենք մեր մի տեսակ ազգաբէրներին, որոնք հոգաբարձական մասը ինարդանների, երկու կոպէկ նուէրի վրա հաղար յօդուածներ են գրում, որոնք մի թատրոնական ներկայացման մասնակցելը համարում են հայրենասիրական մի հերոսութիւն, որոնք մի խնայքում խօսացած մի դատարկ ճառը ընդունում են, իբրև ազգային մի խորհրդաւոր պատգամախօսութիւն.—և սակայն լռում են ամենամասնաւոր լռութեամբ, երբ վճռվում է մեր ժողովրդի ամենակենսական խնդիրներից մէկը, երբ հասարակական ուշադրութիւնը պէտք է դրաված լինի այդ տարաբայով մինչև ամենանուրբ մանրամասնութիւնները։

Խեղճ բառեր—հայրենասիրութիւն, ազգասիրութիւն։ Որչափ մաքր, նեղ և դատարկ նշանակութիւն էք ստացել դուք մեր առօրեայ կեանքում։ Ամեն մի հասարակ, ամեն մի տարրական մարդկային պարտաւորութիւն մոլորվում է ձեր անունով և պահանջվում է չբնապատողներից առանձին յարգանք։

Գիւղական հողային խնդիրը ազգի ամբողջութեան խնդիրն մի մասն է։ Այն խնդիրն, որին յատկացնվում է ամենածայրահեղ ազգասիրութեան գաղափարը։ Չէ կարելի սիրել կատարելապէս ազգի ամբողջութիւնը և չը սիրել գիւղական հողային խնդիրը։ Լաւ կարգադրված հողային յարաբերութիւնների հիմքը—այս խնդրի յաջողութեան պայմաններից մէկն է։

Իսկայն երևում է, որ հայրենասիրութիւնը մոգանում մի անորոշ գաղափարական հանգոցութիւն է, որ նա զգայութիւն ունի միայն իրրև զգացմունք, բայց չատ ազքատ է բովանդակութեամբ։ Եւ իրաւի, մեր ազգասէրը չէ կարդացում գնանատել իր առօրեայ կեանքի երեսոյթները։ Նա անտարբեր կերպով լսում է այսօր կալուածատէրի բռնդի մասին, էգուց գիւղացու, միւս օր վաճառականի և նա անտարբեր նայում է այդ բոլորի վրա։ Նա մեծն ու փոքրը, լաւն ու վատը, կարող ու անկարը զանազանելու ընդունակութիւն չունի։

Մինչդեռ եթէ ընդունենք թէ նա ամեն բանի վրա նայում է միայն մի առանձին ազգասիրական կէտից—գարձեալ պէտք է զարթ և նայեսկաստր, որ այդ և այդպիսի խնդիրներ պէտք է ծագեն նոյն իսկ փոքր-Ասիայում, և թէ պատրաստութիւնը մինչև հարկաւոր է։

Թէ սպասում ենք որ Ազգիան մեր գիւղացու պաշտպանը դուրս գայ։ Թէ այսօր զոռում զոչում ենք եղբայրակիցների թշուառութեան վրա միայն այն նպատակով, որ էգուց խլելով նրանց անկարգ թիւրքիական կամայականութիւնից, գրեթէ կանոնաւոր կալուածատիրական հնչունների տակ։ Ուրեմն զուր տեղը չեն Կ. Պոլսի էֆէնդիները յոյս կապում—հայ ժողովրդի վրա ազգասիրական ցեղեր դառնալու։

Պ. Թումանեանի ճառը հաւանեցին. չատ մեծ ուրախութեամբ լսեցին այն կէսը, որ վերաբերում էր հայ գիւղացուն, այն միտքը, որ նա յայտնեց հայ գիւղացու մասին, իբրև միակ ազգային հիմնական տարրի։ Այդ բոլորը հաւանեցին։ Բայց ինչով է նկատվում թէ գիտակցաբար է կատարվել այդ։ Չէ կարելի գիտակցաբար յարգել այդ տեսակ խորհրդածութիւններ և խուլ մնալ մեր առաջ կատարվող ժողովրդական կարեւոր խնդիրներին։

Պէտք է ունենալ լայն զարգացած հայրենասիրութիւն, նուրբ հասարակական զգացմունք, եթէ ոչ մեր առօրեայ թեթեւջրեվ ազգասիրութիւնով մենք կարող ենք ազգային չատ բարիքներից զրկվել մեր ազատութեան և անշարժութեան պատճառով։ Կալուածական խնդիրը վերաբերում է և ուսումնարանական և վանքական հողերին և մենք ապացոյցներ ունենք, որ վերջին ժամանակներս վանքերը վանահայրերի անհմտութիւնից—զրկվել են հողի մասերից։

Եթէ կալուածական և դրա նման խնդիրների գրականական կերպով քննադատութիւնը անկարող ես լինի ազդեցութիւն ունենալ օրէնսդրական չրջանների վրա, այնու ամենայնիւ դա ամենայարմար միջոց է գիտակցաբար վերաբերել սոփորելու կարեւոր խնդիրներին։ Հասարակութիւնը կը զարգանայ այդ քննադատութեամբ, կը խօսի այս ու այն անկիւնում։ Այդ ընդհանուր խօսքի ձայնը կը գիտէ և մեծին և փոքրին և նոր իրաւարանական մտածողութիւն ուսումնասիրողները կը հետաքրքրվեն այդ խնդիրներով, կը պատրաստվեն աւելի օգտաւէտ մարդիկ լինելու իրրև ժողովրդի հոգաբարձներ, պաշտպանելու նրա իրաւունքները։ Պատանի անտեսագէտը, գիւղատնտեսը նիթեր կառնեն իրանց հայրենիքի կեանքից և կը զարգանան ու կուսանեն աւելի խելացի ու գործնական կերպով։ Եթէ խոր ուսումնասիրութիւնը կարողացաւ ցոյց տալ պրած վերանորոգումների լաւ և վատ կողմերը, կարողացաւ նեկատել և գուշակել հետեւանքներ՝ նա կարող է օգնութիւն հասել, որչափ կարելի է չտա ստիպելով լրացնել պակասորդը, վերցնել աւելորդը, վնասակարը։ Եւ չէ կարելի, որ խոր ուսումնասիրութեան վրա հիմնված առաջարկութիւնները անուշադիր մնան առ մինչ. չատ թէ ուշ նրանք իրանց արժանին կը ստանան։

Որչափ չատ սկսենք ուսումնասիրութիւնը, այնչափ լաւ։

Ուսումնասիրութիւնից զատ ուրիշ խելացի ելք չը կայ թշուառութիւններից և ընդհանուր տառապանքներից։ Ուսումնասիրութիւն և զարգացած հասարակական խղճմտանք։

Մոսկվա Ա. Քալանթար